

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՅԻ ԹՅՈՒՆ

2022

## ՔԻՄԻԱ

ԹԵՍ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-զրբույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-զրբույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն

**1** Հետևյալ հատկանիշներից ո՞րը չի կարելի վերագրել նյութի մեկ մոլեկուլին.

- 1) քանակական բաղադրությունը
- 2) խտությունը
- 3) իզոտոպային բաղադրությունը
- 4) որակական բաղադրությունը

**2** 25 - ական գրամ զանգվածով հետևյալ պարզ նյութերից որի՝ նյութաքանակն է (մոլ) առավել մեծ.

- 1) S
- 2) Na
- 3) Al
- 4) C

**3** Ինչպիսի՝ քիմիական կապ է առաջանում A և B տարրերի ատոմների միջև, եթե դրանց հարաբերական էլեկտրաֆացասականության արժեքների տարբերությունը մեծ է երկուսից.

- 1) իոնային
- 2) կովալենտային ոչ բնեռային
- 3) կովալենտային բնեռային
- 4) ատոմային

**4** Քվանտային թվերի ո՞ր արժեքներով է բնութագրվում էլեկտրոնը 3d ենթամակարդակում.

- 1) n=2, ℓ=1
- 2) n=3, ℓ=2
- 3) n=3, ℓ=1
- 4) n=2, ℓ=0

**5** Համապատասխանեցրե՛ք նյութի բանաձևը և դրա մոլեկուլում  $\sigma$  - կապերի թիվը.

<i>Նյութի բանաձև</i>	<i><math>\sigma</math> - կապերի թիվ</i>
w) $C_2H_2$	1) 1
p) $HCOOH$	2) 2
q) $NH_3$	3) 3
n) $N_2$	4) 4 5) 5


*Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.*

- 1) w4, p5, q2, n3
- 2) w4, p5, q1, n2
- 3) w3, p4, q3, n1
- 4) w3, p4, q2, n1

**6** Որո՞նք են հիմնական վիճակում ատոմի  $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^3$  էլեկտրոնային բանաձևները.

- 1)  $CH_4$  և  $CO_2$
- 2)  $NH_3$  և  $N_2O_5$
- 3)  $H_2S$  և  $SO_3$
- 4)  $PH_3$  և  $P_2O_5$

**7** Ո՞ր տարրերի իզոտոպներն են մասնակցում հետևյալ միջուկային ռեակցիաներին.



- 1)  ${}^{15}_7 N$ ,  ${}^{151}_{69} Eu$
- 2)  ${}^{15}_7 N$ ,  ${}^{153}_{69} Eu$
- 3)  ${}^{14}_7 N$ ,  ${}^{153}_{69} Eu$
- 4)  ${}^{14}_7 N$ ,  ${}^{151}_{69} Eu$

**8** Սովորական պայմաններում ո՞ր շարք ներառված բոլոր նյութերն ունեն ատոմային կառուցվածք.

- 1) գրաֆիտ, սիլան, ածխածնի (IV)օքսիդ
- 2) սիլիցիումի (IV)օքսիդ, կարբոռունդ, ալմաստ
- 3) ամոնիակ, պլաստիկ ծծումբ, օգոն
- 4) մեթան, ազոտ, ֆուֆորի (V)օքսիդ

**9** Ո՞ր գույզ ներառված աղերի ջրային լուծույթներում լակմուսի գույնը կկարմրի.

- 1)  $\text{Na}_2\text{S}$ ,  $\text{AgNO}_3$
- 2)  $\text{NH}_4\text{NO}_3$ ,  $\text{FeCl}_3$
- 3)  $\text{K}_2\text{SO}_4$ ,  $\text{NaNO}_3$
- 4)  $\text{Na}_2\text{CO}_3$ ,  $\text{CH}_3\text{COONa}$

**10** Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը.

Ատոմային օրբիտալը \_\_\_\_\_, որտեղ էլեկտրոնի գտնվելու հավանականությունն ամենամեծն է:

- 1) էլեկտրոնային ամպի լիցքն է
- 2) մերձմիջուկային տիրույթ է
- 3) ատոմի միջուկն է
- 4) միայն արտաքին էլեկտրոնային թաղանթն է

**11** Ո՞ր շարքի բոլոր նյութերում է ծծմբի օքսիդացման աստիճանը նույնը.

- 1)  $\text{FeS}_2$ ,  $\text{H}_2\text{S}$ ,  $\text{SCl}_2$
- 2)  $\text{SO}_2$ ,  $\text{SOCl}_2$ ,  $\text{Li}_2\text{SO}_3$
- 3)  $\text{H}_2\text{SO}_3$ ,  $\text{Na}_2\text{S}_2\text{O}_7$ ,  $\text{K}_2\text{SO}_4$
- 4)  $\text{SO}_2\text{Cl}_2$ ,  $\text{Na}_2\text{SO}_3$ ,  $\text{SO}_3$

**12** Ինչպես է փոխվում հիմքի ուժը հետևյալ շարքում.  
 $\text{LiOH} - \text{Ca(OH)}_2 - \text{Mg(OH)}_2 - \text{Fe(OH)}_3$

- 1) թուլանում, հետո ուժեղանում է
- 2) ուժեղանում, հետո թուլանում է
- 3) թուլանում է
- 4) ուժեղանում է


**13** Համապատասխանեցրե՛ք ռեակցիայի տեսակը, փոխազդող նյութերը և համապատասխան ռեակցիաների հավասարումների գործակիցների գումարը:

Տեսակ	Փոխազդող նյութեր	Հավասարման գործակիցների գումար
ա) Քայքայման	1) $\text{HNO}_3 + \text{Ba}(\text{OH})_2 \rightarrow$	Ա) 3
բ) Սիացման	2) $(\text{Cu}(\text{OH})_2\text{CO}_3 \rightarrow$	Բ) 5
շ) Այրման	3) $\text{C}_2\text{H}_6 + \text{O}_2 \rightarrow$	Գ) 7
դ) Փոխանակման	4) $\text{CO}_2 + \text{CaO} \rightarrow$	Դ) 19
ե) Տեղակալման	5) $\text{Na} + \text{H}_2\text{O} \rightarrow$	Ե) 6
	6) $\text{NaOH} + \text{NO}_2 + \text{O}_2 \rightarrow$	Զ) 4

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճշշտ.

- 1) ա2Զ, բ4Ա, զ2Բ, դ5Ե, ե5Գ
- 2) ա2Բ, բ4Ա, զ3Դ, դ1Ե, ե5Գ
- 3) ա2Բ, բ4Ա, զ2Բ, դ1Ե, ե6Գ
- 4) ա2Բ, բ6Դ, զ3Դ, դ5Ա, ե3Ե

**14** Հետևյալ փոխարկումներից ո՞րոնք են համապատասխանում վերականգնման գործընթացի.



- 1) ա, դ, զ
- 2) բ, զ, ե
- 3) ա, դ, ե
- 4) ա, զ, զ

**15** Ո՞ր նյութերի մոլեկուլների միջև կարող են առաջանալ ջրածնային կապեր.


ա) սպիրուներ, բ) ալդեհիդներ, զ) ջուր, դ) էսթերներ, ե) ամինաթթուներ.

- 1) զ, դ, ե
- 2) ա, բ, դ
- 3) ա, զ, ե
- 4) բ, զ, ե

**16** NaCl – ի ջրային լուծույթի կեկտրոլիզի ընթացքում իներտ անտղի վրա անջատված գազը անցկացրել են KOH – ի ջրային տաք լուծույթի մեջ: Ω՝ ր գույզ են ներառված KOH – ի լուծույթում առաջացած նյութերի քիմիական բանաձևերը.

- 1) KClO և KClO<sub>3</sub>
- 2) KCl և KClO<sub>4</sub>
- 3) KCl և KClO<sub>3</sub>
- 4) KCl և KClO

**17** Փոխարկումների հետևյալ շղթայում X նյութը կարող է լինել.



- 1) Zn
- 2) Zn(OH)<sub>2</sub>
- 3) ZnO
- 4) ZnSO<sub>4</sub>

**18-19.** *Փոխազդեցության համար անհրաժեշտ քանակությամբ պղնձի (II) սուլֆատ պարունակող լուծույթի մեջ լցրել են 8,4 գ երկարի փոշի: Ընեազցիան ավարտվելուց հետո պինդ նյութն առանձնացրել են:*

**18** Ինչպես կփոխվի լուծույթի գանգվածը և ոքքանո՞վ.

- 1) կփոքրանա 4 գրամով
- 2) կմեծանա 4 գրամով
- 3) կմեծանա 1,2 գրամով
- 4) կփոքրանա 1,2 գրամով

**19** Ի՞նչ գանգվածով (գ) նոր աղ կառաջանա, եթե լուծույթի գանգվածը փոխվի 3 գրամով:

- 1) 28,5
- 2) 22,8
- 3) 57
- 4) 152


**20** Ո՞ր նյութերի միջև տեղի ունեցող փոխազդեցությանն է համապատասխանում  
 $S^{2-} + 2H^+ = H_2S$  կրծատ իոնական հավասարումը.

- 1) NaOH և H<sub>2</sub>S
- 2) ZnS և HCl
- 3) Na<sub>2</sub>S և HCl
- 4) KHS և H<sub>2</sub>S

**21** NaH, MgCl<sub>2</sub> և ZnSO<sub>4</sub> նյութերի նմուշները լուծել են ջրում և ավելացրել ալկալի մինչև հնարավոր ռեակցիաների ավարտը: Որքա՞ն է չլուծված նյութի մոլային գանգվածը (գ/մոլ).

- 1) 99
- 2) 40
- 3) 58
- 4) 95

**22** Բերված կորերից ո՞րն է համապատասխանում NaOH - ի ջրային լուծույթով հաստատուն կեկտրական հոսանք անցկացնելիս կեկտրոլիտային գուտում ալկալու գանգվածի փոփոխությանը ժամանակի ընթացքում.



**23** Օղով լցված փակ անոթում իրականացվող հետևյալ ռեակցիաներից որի՞ն ընթացքում ձնշումն անոթում չի փոփոխվի.

- 1) կրաքարի քայքայում
- 2) սնդիկի օքսիդի քայքայում
- 3) ածխածնի թերայրում
- 4) ծծմբի այրում

**24** Կրաջրի և հետևյալ նյութերից որի՞ փոխազդեցությունից կանչատվի սուր հոտով գազ.

- 1)  $\text{KCl}$
- 2)  $\text{Na}_2\text{CO}_3$
- 3)  $\text{Ba}(\text{NO}_3)_2$
- 4)  $(\text{NH}_4)_2\text{SO}_4$

**25** Ո՞ր գազով հազեցած ջրային լուծույթում երկարի կոռոզիան կընթանա առավել արագ.

- 1) թթվածին
- 2) ջրածին
- 3) ծծմբի (IV) օքսիդ
- 4) ածխածնի (II) օքսիդ

**26** Ո՞րն է տրված՝  $2\text{NO}_{(g)} + \text{O}_{2(g)} \rightarrow 2\text{NO}_{2(g)}$  համասեռ ռեակցիայի արագության կինետիկական հավասարումը.

- 1)  $V = k \cdot C^2(\text{NO}_2)$
- 2)  $V = k \cdot C(\text{NO}) \cdot C(\text{O}_2)$
- 3)  $V = k \cdot C^2(\text{NO}) \cdot C(\text{O}_2)$
- 4)  $V = 2k \cdot C(\text{NO}) \cdot C(\text{O})$

**27** Ո՞ր շարք են ներառված միայն ուժեղ կեկտրոլիտների բանաձևեր.

- 1)  $\text{KMnO}_4, \text{H}_2\text{CO}_3, \text{KOH}$
- 2)  $\text{CH}_3\text{COOH}, \text{KClO}_4, \text{Ba}(\text{OH})_2$
- 3)  $\text{KClO}_3, \text{HCl}, \text{NaOH}$
- 4)  $\text{LiOH}, \text{AlCl}_3, \text{HF}$

**28** Ո՞ր գործոնի ազդեցությամբ  $\text{FeO}_{(s)} + \text{H}_2_{(g)} \rightleftharpoons \text{Fe}_{(s)} + \text{H}_2\text{O}_{(g)} + Q$  համակարգում հավասարակշռությունը կտեղաշարժվի դեպի աջ.

- 1) ճնշումը փոքրացնելով
- 2) ճնշումը մեծացնելով
- 3) շերմաստիճանն իջեցնելով
- 4) շերմաստիճանը բարձրացնելով

**29** Ω<sup>°</sup>ρ μետաղը *հնարավոր չէ* ստանալ այսումինաջերմային եղանակով.

- 1) Mn
- 2) Cu
- 3) Na
- 4) Fe

**30** Ω<sup>°</sup>ρ շարքում են համապատասխանորեն բերված *Ca<sub>3</sub>P<sub>2</sub>, P<sub>2</sub>O<sub>5</sub>, HPO<sub>2</sub> բանաձևերն ունեցող միացությունների* և տաք ջրի փոխազդեցությունից ստացվող ֆուֆոր պարունակող միացությունների բանաձևերը.

- 1) PH<sub>3</sub>, HPO<sub>3</sub>, H<sub>3</sub>PO<sub>3</sub>
- 2) PH<sub>3</sub>, H<sub>3</sub>PO<sub>4</sub>, H<sub>3</sub>PO<sub>3</sub>
- 3) P<sub>2</sub>O<sub>5</sub>, H<sub>3</sub>PO<sub>4</sub>, H<sub>3</sub>PO<sub>2</sub>
- 4) P<sub>2</sub>O<sub>3</sub>, H<sub>4</sub>P<sub>2</sub>O<sub>7</sub>, H<sub>3</sub>PO<sub>3</sub>

**31** Ωրո՞նք են բաց թողած բառերը.

*Սիլիցիումը բարձր ջերմաստիճանում կալցիումի հետ առաջացնում է  
\_\_\_\_\_ , որի և աղաթթվի փոխազդեցության արդյունքում անջատվում է  
զազային նյութը.*

- 1) սիլիկատ, ջրածին
- 2) սիլիկատ, սիլան
- 3) սիլիցիդ, սիլան
- 4) սիլիցիդ, ջրածին

**32** Ω<sup>°</sup>ր նյութը կառաջանա 2 – բրոմբութանի և ավելցուկով վերցրած մետաղական նատրիումի փոխազդեցությունից.

- 1) 3 – մեթիլ – 4 – էթիլպենտան
- 2) 2, 3 – երկմեթիլհեքսան
- 3) 3, 4 – երկմեթիլհեքսան
- 4) 2, 4 – երկէթիլբութան

**33** Մեթիլ – և էթիլսպիրտների խառնուրոյի խիտ ծծմբական թթվի հետ տաքացնելիս ( $t < 140^{\circ}\text{C}$ ) հիմնականում ո՞ր նյութերն են ստացվում.

- 1) մեթիլէթիլեթեր, էթան և երկմեթիլեթեր
- 2) երկմեթիլեթեր, երկէթիլեթեր և մեթիլէթիլեթեր
- 3) երկմեթիլեթեր և երկէթիլեթեր, էթան
- 4) երկմեթիլեթեր, էթիլեն, պրոպիլեն

**34** Հետևյալ միացություններից որո՞նք չեն փոխազդում պղնձի (II) հիդրօքսիդի հետ.

*w) LiOHawl p) qLiHgErhun q) LPOHawl n) PdNqHlaujhru*

- 1) q, n
- 2) w, q
- 3) w, p
- 4) p, q

**35** Հետևյալ արոմատիկ միացություններից ո՞րը չի պատկանում ֆենոլների դասին.

- 1) CH<sub>3</sub>C<sub>6</sub>H<sub>4</sub>OH
- 2) C<sub>6</sub>H<sub>5</sub>CH<sub>2</sub>OH
- 3) C<sub>6</sub>H<sub>5</sub>OH
- 4) HOCH<sub>2</sub>CH<sub>2</sub>OH

(36-37) Տրված է փոխարկումների հետևյալ շղթան՝  $CH_3COOH \rightarrow X \rightarrow CH_4$ .

**36** Ο՞րն է X նյութն ըստ շղթայի.

- 1) մեթանոլ
- 2) նատրիումի ացետատ
- 3) ացետիլեն
- 4) մեթանալ

**37** Որքա՞ն է sp<sup>3</sup> հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների թիվը X նյութի մեջ մոլեկուլում.

- 1) 2
- 2) 1
- 3) 4
- 4) 3

**38** Ο՞ր գույգ նյութերի փոխազդեցությունից թթու կառաջանա.

*w) CH<sub>4</sub> և O<sub>2</sub> (t, p, կատ.) q) CH<sub>3</sub>COOK և H<sub>2</sub>SO<sub>4</sub> (նոր)*  
*p) CH<sub>3</sub>CHO և H<sub>2</sub> (t, կատ.) n) CO և H<sub>2</sub> (t, Zn/Cr կատ., p)*

- 1) w, q
- 2) q, n
- 3) w, p
- 4) p, q

**39** Հետևյալ նյութերից որի՞ հետ կարբոնաթթուն չի փոխազդի, իսկ ամինաթթուն կփոխազդի.

- 1)  $\text{CH}_3\text{OH}$
- 2)  $\text{NaOH}$
- 3)  $\text{Na}$
- 4)  $\text{HCl}$

**40** Ω ° թ միաշաքար(ներ)ն է(են) ստացվում սախարողի հիդրոլիզից.

- 1) միայն  $\beta$  – ֆրուկտոզ
- 2)  $\alpha$  – գլյուկոզ և  $\beta$  – ֆրուկտոզ
- 3) միայն  $\alpha$  – գլյուկոզ
- 4)  $\beta$  – գլյուկոզ և  $\alpha$  – ֆրուկտոզ

**41** Նորմալ պայմաններում  $1,8 \text{ դմ}^3$  էթանի լրիվ այրման համար ծախսվել է  $5,6 \text{ դմ}^3$  օգննացված թթվածին: Որքա՞ն է օգննի ծավալը (մլ, ն. ալ.) օգննացված թթվածնում:

- 42 Նատրիումի կարբոնատի և հիդրոկարբոնատի 95 գ խառնուրդն ավելցուկով վերցրած աղաթթվով մշակելիս անջատվել է 25 լ ծավալով զազ  $27^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի և 99,6 կՊա ճնշման պայմաններում ( $R = 8,3 \Omega/\text{մոլ}\cdot\text{Կ}$ ,  $T_0 = 273 \text{ Կ}$ ): Որքա՞ն է նատրիումի կարբոնատի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:
- 43 Քիմիական ռեակցիայի արագությունը  $20^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում հավասար է  $3 \text{ մոլ}/\text{l} \cdot \text{վրկ}$ , իսկ  $50^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում՝  $81 \text{ մոլ}/\text{l} \cdot \text{վրկ}$ : Որքա՞ն է ռեակցիայի արագության ջերմաստիճանային գործակիցը ( $\gamma$ ):
- 44 Ալյումինի սուլֆատ պարունակող 400 մլ լուծույթում առկա էն 21,6 գ զանգվածով  $\text{Al}^{3+}$  իոններ: Որքա՞ն է այդ լուծույթում բոլոր իոնների գումարային կոնցենտրացիան (մոլ/l, հիդրոլիզն անտեսել):

**45** Նատրիումի և ամոնիումի նիտրատների հավասարամոլային խառնուրդի որոշ զանգվածով նմուշը տաքացրել են բաց անոթում մինչև հաստատուն զանգված: Քանի անգամ է ելային խառնուրդում պարունակվող նյութերի գումարային քանակը (մոլ) մեծ ստացված պինդ մնացորդում պարունակվող նյութ(եր)ի քանակից:

**(46-47)** Կալիումի պերմանգանատի և մանգանի (IV) օքսիդի  $2 : 5$  մոլային հարաբերությամբ  $93,875$  գ խառնուրդը քանակապես փոխազդել է աղաթռվի հետ, իսկ անջատված զազը  $20^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում կլանվել է  $25\%$  զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի անհրաժեշտ քանակությամբ լուծույթով:

**46** Որքա՞ն է անջատված զազի ծավալը (լ, ն. պ.):

**47** Որքա՞ն է անջատված զազի կլանման համար անհրաժեշտ 25 % զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի լուծույթի զանգվածը (գ):

(48-49) Նատրիումի հիդրօքսիդի և քլորիդի 19,7 գ խառնուրդը լուծել են 194,8 գ ջրում և լուծույթը ենթարկել կեկտրոլիզի իներտ կեկտրոդներով: Կեկտրոլիզոր դադարեցրել են այն պահին, երբ կեկտրոդների վրա անջատվել է 17,92 լ (ն.պ.) գազային խառնուրդ, որում թթվածնի ծավալային բաժինը 25 % է:

**48** Որքա՞ն է NaOH-ի զանգվածային բաժինը (%) կեկտրոլիզից հետո մնացած լուծույթում:

**49** Որքա՞ն է կեկտրոլիզի արդյունքում ստացված գազային խառնուրդում ջրածնի զանգվածը (գ):

(50-51) Նորմալ պայմաններում  $28 \text{ l } SO_2$ ,  $56 \text{ l } O_2$  և  $28 \text{ l } SO_3$  պարունակող գազային խառնուրդը կատալիզորդի առկայությամբ տաքացնելիս գոյացել է հավասարակշռային խառնուրդ, որում  $SO_2$  –ի ծավալային բաժինը  $40\%$  է:

50 Οքսանի կանոնակիր պայմաններում:

51 Οքսանի կանոնակիր պայմաններում, որը կատացվի հավասարակշռային խառնուրդից առանձնացված  $SO_2$  –ը  $122,5$  գ կալիումի հիդրօքսիդ պարունակող  $910$  գ լուծույթի մեջ անցկացնելիս:

(52-53) Կալիումի նիտրիտի 1 լ ջրային լուծույթում, որում աղի հիդրոլիզի աստիճանը 4 % է, հայտնաբերվել են  $0,68$  գ հիդրօքսիդի իոններ (ստացված ալկալին ամբողջովին դիտցված է):

52 Ի՞նչ զանգվածով (գ) կալիումի նիտրիտ պետք է լուծել ջրում 30 լ ծավալով նույն կոնցենտրացիայի լուծույթ պատրաստելու համար:

53 Ի՞նչ զանգվածով (գ) չհիդրոլիզված աղ է պարունակվում 30 լ այդ լուծույթում:

(54-55) Հստ հելիումի 5,05 հարաբերական խտությամբ ջրածնի, ածխածնի (II) օքսիդի և էթիլենի 224 լ (ն. պ.) խառնուրդի այրման համար ծախսվել է 580 գ քթվածին:

54

Որքա՞ն է ջրածնի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:

55

Որքա՞ն է էթիլենի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

- (56-58) Կալցիումի նիտրիդի և մետաղական կալցիումի որոշակի զանգվածով խառնուրդը ջրում լուծելիս ստացվել է 740 գ զանգվածով քափանցիկ լուծույթ և անօտպել է 12 գ/մլ միջին մոլային զանգվածով 20,16 լ (ն. պ.) գազերի խառնուրդը, որը քանակապես փոխազդել է ավելցուկով վերցրած տաք պղնձի (II) օքսիդի հետ:

56 Որքա՞ն է մետաղական կալցիումի զանգվածը (գ) ելային պինդ խառնուրդում:

57 Որքա՞ն է կեկտրոլիտի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

58 Ի՞նչ զանգվածով (գ) պղնձի (II) օքսիդ է փոխազդել գազերի խառնուրդի հետ:

(59-61) Որոշակի զանգվածով պղնձի (II) նիտրատը ջերմային քայլայման ենթարկելիս  
ծախսվել է  $2,16 \text{ կՋ}$  ջերմություն: Նշված ռեակցիայի ջերմաքիմիական  
հավասարումն է՝  $2\text{Cu}(\text{NO}_3)_2 = 2\text{CuO} + 4\text{NO}_2 + \text{O}_2 - 432 \text{ կՋ}$ :

59 Որքա՞ն է ստացված գազային խառնուրդի զանգվածը (մգ):

60 Ստացված գազային խառնուրդն անցկացրել են  $3,36 \text{ գ}$  կալիումի հիդրօքսիդ  
պարունակող  $99,92 \text{ գ}$  լուծույթի մեջ: Որքա՞ն է լուծույթում գոյացած աղի  
զանգվածային բաժինը (%):

61 Ի՞նչ ծավալով (մլ) ծծմբական թթվի  $0,1 \text{ մոլ/լ}$  կոնցենտրացիայով լուծույթ  
կփոխազդի աղի քայլայումից ստացված պինդ մնացորդի հետ:

- (62-64) Մեկական կարբօքսիլային խումբ պարունակող բնական երկու ամինաթթուների 40,4 գ զանգվածով խառնուրդն անմնացորդ փոխազդում է 16 գ նատրիումի հիդրօքսիդի կամ 0,7 մոլ մետաղական նատրիումի հետ:

62

Որքա՞ն է փոքր մոլային զանգվածով ամինաթթվի մոլային քաժինը (%) խառնուրդում:

63

Որքա՞ն է մեծ մոլային զանգվածով ամինաթթվի մոլային զանգվածը (գ/մոլ):

64

Ի՞նչ թվով երկայեպտիդներ կստացվեն ամինաթթուների խառնուրդից:

(65-67) Երկաթի (II) սուլֆիդի, կալիումի հիդրոկարբոնատի և կալիումի քլորիդի 128,4 գ խառնուրդը մշակել են ավելցուկով վերցրած 12,5 % զանգվածային բաժնով աղաթթվով: Ստացված զազային խառնուրդը ծծմբի (IV) օքսիդի քրային լուծույթի մեջ անցկացնելիս առաջացել է 14,4 գ պինդ նյութ, իսկ մնացած չոր զազը շիկացած կոքսի վրայով անցկացնելիս ծավալը մեծացել է 20,16 լիտրով (ն. պ.) (ածխածնի (IV) օքսիդի լուծելիությունը ջրում անտեսել):

65

Որքա՞ն է ելային խառնուրդում փոքր մոլային զանգվածով աղի զանգվածը (q):

66

Ելային խառնուրդն աղաթթվով մշակելիս ստացված զազային խառնուրդում որքա՞ն է մեծ մոլային զանգվածով զազի ծավալային բաժինը (%):

67

Որքա՞ն է աղերի խառնուրդի հետ փոխազդած աղաթթվի զանգվածը (q):

68

Համապատասխանեցրե՛ք ռեակցիայի ելանյութերը և օրգանական վերջանյութերը.

<b>Եղանյութեր</b>	<b>Վերջանյութեր</b>
w) $\text{CH} \equiv \text{C} - \text{CH}_3 + \text{H}_2\text{O} \xrightarrow{\text{Hg}^{2+}\text{H}^+}$	1) $\text{CH}_3 - \text{CH}_2 - \text{CHO}$
p) $\text{CH}_3 - \text{CH}_2 - \text{CH} = \text{O} + \text{Cu}(\text{OH})_2 \rightarrow$	2) $\text{CH}_3 - \text{CH}_2 - \text{CH} = \text{O}$
q) $\text{CH}_3 - \text{CH}_2 - \text{CH} = \text{O} + \text{H}_2 \rightarrow$	3) $\text{CH}_3 - \text{CO} - \text{CH}_3$
η) $\text{CH}_3 - \text{CHOH} - \text{CH}_3 + \text{CuO} \xrightarrow{t}$	4) $\text{CH}_3 - \text{CHOH} - \text{CH}_3$ 5) $\text{CH}_3 - \text{CH}_2 - \text{COOH}$ 6) $\text{CH}_3 - \text{CH}_2 - \text{CH}_2\text{OH}$

69

Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական ռեակցիաների վերաբերյալ.

- 1) Միացման ռեակցիաները միայն ջերմանջատիչ են:
- 2) Ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցները ցույց են տալիս նաև փոխազդող նյութերի մոլային հարաբերությունը:
- 3) Գազային նյութերի միջև ընթացող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների հարաբերությունը հավասար է այդ նյութերի ծավալների հարաբերությանը:
- 4) Ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների հարաբերությունը հավասար է համապատասխան նյութերի զանգվածների հարաբերությանը:
- 5) Տեղակալման ռեակցիաները նաև հիմնականում վերօք ռեակցիաներ են:
- 6) Բոլոր միացման ռեակցիաները նաև վերօք ռեակցիաներ են:

70

100 գ ջրում լուծել են այնքան կալիում, որ ստացված ալկալու լուծույթը բավարարել է 27,44 % զանգվածային բաժնով ծծմբական թթվի 16 մլ լուծույթը ( $\rho = 1,25 \text{ գ/մլ}$ ) չեղոքացնելու համար: Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների Ճշմարտացիությունը խնդրի վերաբերյալ.

- 1) Կալիումի հիդրօքսիդի զանգվածային բաժինը լուծույթում 6,016 % է:
- 2) Լուծույթում պարունակվող ծծմբական թթվի զանգվածը 5,488 գ է:
- 3) Ծծմբական թթուն չեղոքացնելու համար անհրաժեշտ է 0,112 մոլ կալիումի հիդրօքսիդ:
- 4) Կալիումի հիդրօքսիդի լուծույթի զանգվածը 100 գ է:
- 5) Խնդրում ներկայացված ռեակցիաների հավասարումների քանակաշափական գործակիցների գումարը 12 է:
- 6) Լուծված կալիումի զանգվածը 4,368 գ է: